ԱԼՈՐՏ

# ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ...

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի նախաձեռնությամբ, 2018-2019 ուստարվա եզրագծին եւ նոր՝ 2019-2020 ուստարվա մեկնարկին, կրթական ոլորտում ծրագրվում են նշանակալի բարեփոխումներ՝ կապված ինչպես ուսուցիչների վարձատրության, այնպես էլ մանկավարժներին առաջադրվող պահանջների, հանրային դպրոցներում ուսուցման մակարդակի բարձրացման, ուսուցման արդիական մեթոդների կիրարկման եւ այլնի հետ:*

Ծրագրված բարեփոխումների հետ կապված խմբագրությունը ստացվել է բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրել են առավել մանրամասն ներկայացնել այդ ուղղությամբ իրականացվող քայլերը: Հասցեագիրներին հետաքրքրում են ուսուցիչների աշխատավարձի ավելացման, կենսաթոշակառու ուսուցիչների համար նախարարության կողմից առաջադրված սխեմայի մանրամասները:

Կրթական ոլորտի բարեփոխման ծրագրի շնորհանդեսին Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ ընթացիկ տարվա աշնանը մանկավարժների՝ ավագ, առաջատար եւ մենտոր ուսուցիչների նվազագույն աշխատավարձն ավելացվելու է 150 լարիով, եւ ինչպես հավաստիացրեց վարչապետը, ուսուցիչների աշխատավարձը պարբերաբար կավելացվի. «Խոստանում եմ՝ 2022 թվականին Վրաստանում ուսուցչի նվազագույն աշխատավարձը կկազմի 1500-1800 լարի»,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Իր հերթին, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին նշեց, որ կրթական բարեփոխումների շրջանակներում, դպրոցներում կրթության որակը բարձրացնելու նպատակով, կրթության նախարարությունն ընդհանուր կրթության ասպարեզում բարեփոխման նոր փուլ է թեւակոխում: Փոփոխության նպատակը դպրոցնեում կրթական այնպիսի միջավայր ձեւավորելն է, որը թույլ կտա աշակերտներին ձեռք բերել այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու համար:



Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող, շարժառիթային, ժամանակակից գիտելիքներով զինված, ուժեղ ուսուցիչներ, որոնք կստանան պատշաճ աշխատավարձ:

Նախարարի պարզաբանմամբ, մշակվել է հատուկ սխեմա, ըստ որի, բացի ավագ, առաջատար եւ մենտոր ուսուցիչների աշխատավարձի ավելացման, կարող են հավակնել նաեւ այն գործող մանկավարժները, որոնք 2019 թվականի ամռանը կհաստատեն նվազագույն իրավասությունը եւ կբարձրացնեն կարգավիճակը, 2019-ի սեպտեմբերից նույնպես կստանան ավելացված աշխատավարձ: Բացի այդ, ուսուցչի ցանկության դեպքում, ելնելով մանկավարժների կարիքներից, պետությունը կապահովի գործող ուսուցիչների որակավորման բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր, որից հետո երկրորդ անգամ հնարավորություն կտրվի նվազագույն իրավասության հաստատման եւ կարգավիճակի բարձրացման համար քննություն հանձնել 2019-ի աշնանը:

Գործող ուսուցիչները, ովքեր ավագ ուսուցչի կարգավիճակ ստանալու պահանջներն արդեն մասամբ լրացրել են, հնարավորություն կստանան մինչեւ 2019 թվականի վերջը կուտակել լրացուցիչ կրեդիտ-միավորներ, ինչը նրանց համար կդառնա ավելացված աշխատավարձ ստանալու նախադրյալ:

Մշակված սխեմայում հատուկ բաժին է հատկացված կենսաթոշակային տարիք ունեցող ուսուցիչներին: Մասնավորապես, դրանում տարիքային այդ կատեգորիայի ուսուցիչներին տրված է այլընտրանք. նրանք, ովքեր չունեն նվազագույն իրավասությունը հաստատելու եւ իրենց մասնագիտական կարգավիճակը բարձրացնելու ցանկություն, իրենց մանկավարժական գործունեությունը կկարողանան շարունակել միայն կոնկրետ դպրոցի կարիքի առկայության պայմաններում, մյուս դեպքում, ակտիվ մանկավարժական գործունեությունից կամավոր հրաժարվելու դեպքում, պետության կողմից սահմանվում է արտոնություն՝ 2019 թվականին միանգամյա պետական գումարային մրցանակի տեսքով ստանալ երկու տարվա ընդհանուր աշխատավարձի չափով գումար: Նշենք, որ ուսուցիչներին վերոնշյալ գումարի հանձնումը կսկսվի ընթացիկ տարվա սեպտեմբերից: Ընդ որում՝ թե' գործող եւ թե' կենսաթոշակային տարիքի ուսուցիչների համար մինչեւ կյանքի վերջը առողջության ապահովագրության փաթեթը կմնա ուժի մեջ:

Ավելացնենք, որ, 2019 թվականի դրությամբ, Վրաստանի 2085 հանրային եւ 225 մասնավոր դպրոցներում սովորող շուրջ 575 հազար աշակերտների դասավանդում է 64 329 ուսուցիչ, որից կենսաթոշակային տարիք ունեն 16 406-ը: Այդ թվից շուրջ 6000-ը, սահմանված կարգի համաձայն, մինչեւ մայիսի վերջը հատուկ դիմումով հաստատել է մանկավարժական գործունեությունից հրաժարվելու եւ երկու տարվա աշխատավարձը միանգամից ստանալու արտոնությունից օգտվելու ցանկություն:

Նշենք, որ, ոլորտի բարեփոխման շրջանակներում, նշանակալի ծրագրեր են իրականացվելու կրթօջախների արդիականացման ուղղությամբ: Մասնավորապես, ըստ Վրաստանի կրթական գերատեսչության եւ Համաշխարհային բանկի միջեւ ստորագրված համաձայնագրի, բանկը դպրոցների վերանորոգման ու նոր դպրոցների շինարարության համար հատկացնում է շուրջ 70 միլիոն եվրո: Եվս 22 միլիոն եվրո տրամադրում է Գերմանիան: Այդ գումարն ուղղվելու է կրթական բարեփոխման կարիքների ֆինանսավորմանը:

*Պատրաստեց՝*
*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*




ՈՂՋ ԱՄԱՌ ԱՊՐԻՐ ՄԱԳԹԻԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

**Օպտիկական համացանցի կրկնապատկված արագություն**

Նվերի ակտիվացման համար զանգահարեք **0800100202** հեռախոսահամարով և առանց լրացուցիչ մուծման ստացեք օպտիկական-մանրաթելային համացանցի կրկնապատկված արագություն

Մագթիի նվերը

Առավելագույն կրկնապատկված արագությունը 100մբ/վրկ

ՀՈԲԵԼՅԱՆ

## ԵՎ ԱՆՑԱՎ ԿԵՍ ԴԱՐ... ՈՒ ՆՈՐԻՑ ՀԱՎԱՔՎԵՑԻՆՔ

*Հանդիպումը կայացավ այս օրերին, Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցում: Մթնոլորտը ջերմ էր, հուզումնառատ ու երջանիկ:*



Այդ օրը դպրոցն իր դռները բացեց եւ գրկաբաց ընդունեց 50 տարի առաջ, 1969 թվականին դպրոցն ավարտած շրջանավարտներին: 50 տարի անց եւ մի ողջ իմաստալից կյանք ապրած, արդեն մեծ գերդաստանների տատ ու պապ դարձած մարդիկ տարբեր վայրերից հոգու կարոտի կանչով հավաքվել էին նշելու դպրոցն ավարտելու կեսդարյա հոբելյանը:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը ջերմորեն դիմավորեց նրանց, որից հետո իր շնորհավորանքի խոսքը հղեց դպրոցի տնօրեն Արտուշ Ուռումյանը:

Սրտառուչ էր հատկապես հոբելյար շրջանավարտների սիրելի դասղեկի, այս տարի իր 80-ամյակը նշող, դպրոցի հայոց լեզվի եւ գրականության վաստակաշատ ուսուցչուհու Լենա Միրաքյանի հետ հանդիպումը: Իսկապես երջանկություն էր նորից տեսնել նրան ու զգալ հարազատ ուսուցչուհու անփոխարինելի գորովը: Սաները նրան կրկին դիմավորեցին հոտնկայս ծափողջյուններով ու ծաղկեփնջերով:

Հուզված էին բոլորը, քանի որ բացառիկ էր օրը: 50 տարի անց, նույն դասասենյակում հավաքված, նրանք վերհիշում ու վերապրում էին անցածգնացած եւ արդեն հուշ դարձած դպրոցական տարիները: Նրանց հուզմունքը կրկնապատկեցին աշակերտների ջերմ ելույթներն ու ասմունքը, ում, ի դեպ, հոբելյար շրջանավարտները նվերներ էին պատրաստել, իսկ հարազատ կրթօջախին հանձնեցին «50-ամյա շրջանավարտ» հուշանվերը:

50 տարի անց, կես դար ու մի ողջ կյանք, ուր միախառնված էին թախիծն ու երջանկությունը, արցունքն ու ծիծաղը, անցյալն ու ներկան... ու նաեւ ապագան՝ դպրոցում ձեւավորվող նոր ու երանելի ավանդույթի տեսքով:

*ՆԵԼԼԻ ՉՈԲԱՆՅԱՆ*
*Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի*
*Մառնեուլիի մունիցիպալիտետ*
*Շահումյան ավան*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԵՂԱՆԱԿ

## ԱՆՈՄԱԼ ՏԱՊ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

***Գույե վերջապես հստակ բացատրություն տրվի նրան, թե ինչո՞վ է պայմանավորված վերջին տարիների աննորմալ ջերմությունը, որն իրեն զգացնել է տալիս նաեւ մեզ մոտ եւ, ինչպես տեղեկացել եմ, Եվրոպայում:***

***Ա.Նավասարդյան***

***Բաթումի***



Դուք ճիշտ նկատեցիք, Եվրոպայի երկրներում անոմալ տաք է հաստատվել, օդի ջերմաստիճանն առանձին երկրներում կարող է գերազանցել 40 աստիճանը: Այսպես, Մադրիդում մինչեւ շաբաթվա վերջը ջերմաստիճանը կհաստատվի 41 աստիճանի, Փարիզում, Բեռլինում եւ Հռոմում` 36-38 աստիճանի նշագծին:

Ինչպես նշում են օդերեւութաբանները, բարձր ջերմաստիճանը մայրցամաքի եվրոպական մաս են բերում քամու պոռթկումները Սահարայից: Ֆրանսիան նախազգուշացրել է վտանգի «նարնջագույն» մակարդակի մասին, իսկ իսպանացի օդերեւութաբանները երկիր եկող եղանակը որակել են «ինֆեռնալ»: Ֆրանսիայում սպասվում է 45 աստիճան տաքություն: Բացի Ֆրանսիայից, տապի ազգային ռեկորդներ կարող են սահմանվել Ավստրիայում (ըստ Ցելսիուսի` 38,6 աստիճան), Գերմանիայում (38,5), Շվեյցարիայում (37,2): Բայցեւայնպես, ամենախիստ տապը նորագույն պատմության մեջ գրանցվել է Ֆրանսիայում` 2003 թվականին, երբ երկու ամսվա ընթացքում, ռեկորդային ջերմաստիճանների հետ կապված բարդացումների պատճառով, մահացավ 15 հազար մարդ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ՇԱՔԱՐԸ ԵՎ ՈՒՂԵՂԸ

***Գիտնականներն ուսումնասիրություններ են կատարել պարզելու, թե մարդն ինչպես է լուծում ոչ բարդ խնդիրները շաքար օգտագործելուց հետո: Փորձերը ցույց են տվել, որ գլյուկոզան եւ շաքարը բացասաբար են ազդել ճիշտ պատասխանը գտնելու ունակության վրա, հատկապես այն մարդկանց մոտ, ովքեր թեստն անցկացնելուց առաջ մի քանի ժամ քաղցած են եղել: Իսկ ֆրուկտոզան այդպիսի ազդեցություն չի թողել:***



Շաքարը բթացնում է ուշադրությունը, եթե նույնիսկ այն շատ չնչին է: Եթե դուք պատրաստվում եք քննության կամ հարցազրույցի գնալ, ավելի լավ է քաղցր ոչինչ չուտեք:

Գիտնականները վստահեցնում են, որ շաքար օգտագործելուց հետո ուղեղում կատարվող նեյրոքիմիական փոփոխությունները նման են այն փոփոխություններին, որոնք կատարվում են թմրանյութեր ընդունելուց հետո: Շաքարից հրաժարվելուց հետո նույնպիսի նշաններ են նկատվում, այդ թվում` նաեւ տագնապ, ինչպիսիք նկատվում են նիկոտինից կամ ափիոնից հրաժարվելուց հետո: Մի ժամանակ ծխախոտն էլ էր անվնաս համարվում: Հետո գիտությունը հակառակն ապացուցեց: Հնարավոր է, որ 10 տարի անց էլ ուղեղին շաքարի հասցրած վնասը նույնքան ակնհայտ լինի, որքան ծխախոտինը` թոքերին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

# ՀԱՄԱՑԱՆՑՆ ՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը` նախորդ համարում)

**Իսկ ինչպիսի՞ ազդեցություն կարող են ունենալ ինտերնետային խաղերը:**

Բուռն երեւակայության շրջան համարվող մանկական տարիքում համակարգչային խաղերն իրենց գունավոր աշխարհներով, հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով, հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային: Շատ ավելի լուրջ հետեւանքներ է ունենում այն փաստը, որ շատ խաղերում ագրեսիվ վարքի ձեւեր ու մոդելներ են դրսեւորվում, որոնք երեխաներն առանց գիտակցական վերաբերմունքի ու գնահատականի նմանակման ուժով յուրացնում են: Խաղալով երեխաները նույնանում են իրենց վիրտուալ կերպարի հետ` դառնալով ագրեսիվ, կոնֆլիկտային, դյուրագրգիռ ու նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես, երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակարգչից: Արդյունքում, երեխաների մոտ կարող է ձեւավորվել այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է, թույլատրելի է սպանել, կործանել ու քանդել, ապա դա կարելի է անել նաեւ իրական աշխարհում: Դրանք կարող են նաեւ մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել: Չէ՞ որ երեխան դեռ չի կարող տարբերել խաղն ու իրականությունը: Մեծ մասամբ երեխաների մոտ հոգեբանական կախվածություն առաջանում է դերային խաղերի նկատմամբ: Համակարգչային դերային խաղերում երեխան իր վրա համակարգչային հերոսի դեր է ստանձնում, այն պարտադրում է խաղացող երեխային հանդես գալ կոնկրետ կամ երեւակայական հերոսի դերում: Հենց այս խաղերի ժամանակ է տեղի ունենում երեխայի ամբողջական խորը ներգրավումը խաղի մեջ: Երբեմն, անգամ երեւակայության մեջ շարունակում են կարծես թե գործել համակարգչային հերոսի անձի դիրքերից` գտնվելով իրական կենսական իրադրություններում:

Բացի տեխնիկական միջոցներից, ծնողներն ինչպե՞ս կարող են ստիպել երեխաներին համացանցից շատ չօգտվել կամ այդ ազդեցությունը նվազագույնի հասցնել:

Սովորաբար, համակարգչային կախվածությունը հստակ արտահայտվում է 9-10 տարեկան երեխաների մոտ: Հենց համակարգչային դերային խաղերն են յուրաքանչյուր երեխայի համար հոգեբանական կախվածության մեծ վտանգ ներկայացնում: Ցանկացած տիպի դերային խաղից երեխային դժվար է կտրվել, իրական աշխարհը վերջինիս հետ համեմատած անգույն է ու անհետաքրքիր: Ամեն դեպքում կանխարգելման ուղղությամբ պետք է տարվեն աշխատանքներ նախադպրոցական եւ կրտսեր դպրոցական տարիքներում: Մեծ մասամբ վաղ տարիքում խաղային կախվածությունն է տարածված, իսկ համացանցային



կախվածությունը` ավելի մեծ տարիքում: Ծնողները չեն կարող լիովին արգելել երեխային համակարգչից օգտվել, քանի որ այս դեպքում երեխան իրեն ընկճված, տարբերվող կզգա այլ երեխաների ջրջանում: Առանց սահմանափակումների համակարգչից օգտվելը կհանգեցնի այլ զբաղմունքների նկատմամբ հետաքրքրության կորստի, շփման շրջանակի նեղացման, ծնողների հետ շփումների աստիճանական կորստի, իրական կյանքում ակտիվության նվազման, սահմանափակումների նկատմամբ դրսեւորվող կամակորության, նյարդայնության:

Խաղը դադարեցնել դժվար է, քանի որ հաղթելով ցանկանում են այն ամրապնդել, պարտվելով` հաղթել, այսպես դժվար է կտրվել խաղից: Հոգեբանները, մանկավարժները, ընդհանրապես, խաղերին դեմ չեն, խաղն անհրաժեշտ է երեխային զարգանալու համար, դեմ են կոնկրետ տեսակի խաղերին, որոնք խաթարում են հոգեկանը: Ծնողական արգելքը պետք է հիմնավոր լինի: Ծնողներին խորհուրդ է տրվում բացատրել երեխաներին, որ կայքերը կարող են լինել «վատ» եւ «լավ», որ համացանցում տարբեր մարդիկ են շփվում, որեւէ կասկածելի եւ վատ բան նկատելու դեպքում, տեղեկացնեն ծնողին: Անհրաժեշտ է համակարգչում ծրագրային այնպիսի ապահովություն ունենալ, որը ծնողական հսկողության դերը կապահովի: Ցանկալի է, որ համակարգիչը երեխայի սենյակում չլինի, որպեսզի երեխան չգայթակղվի:

Ամենապարզ եւ գործուն ցուցումներից է ժամանակի սահմանումը, որ երեխան կարող է անցկացնել համակարգչի մոտ, իհարկե ոչ խիստ մեթոդների կիրառմամբ: Երեխաների առողջության եւ հոգեկանի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ցանկալի է, որ ծնողները երեխային բավական ժամանակ, խնամք եւ հոգատարություն հատկացնեն: Երեխաները հաճախ համակարգչային աշխարհ են ընկղմվում նաեւ ընտանիքում անբավարար հուզական հարաբերությունների արդյունքում: Կարեւոր է, որ ծնողները հետաքրքրվեն ոչ միայն երեխայի ուսման հաջողություններով, այլ նաեւ` նրա հնարավոր անհանգստություններով, անհրաժեշտ է միշտ զրուցել երեխայի հետ, հարցնել նրան խնդիրների եւ երազանքների մասին, կիսվել իր ապրումներով: Ծնողները պետք է երեխայի մոտ իրենց նկատմամբ վստահություն զարգացնեն, աջակցեն, խրախուսեն նրա նվաճումները, միշտ ընդգծեն նրա հաջողությունները: Անհրաժեշտ է երեխաների մոտ զարգացնել սոցիալական հմտություններ, եթե երեխաները դժվարություններ են ունենում հասակակիցների հետ շփվելիս, ամաչկոտ են, երկչոտ, համակարգիչը շատ հեշտորեն կդառնա փոխարինող, չէ՞որ վիրտուալ տարածությունում երեխան իրեն կարող է զգալ ուժեղ, համարձակ եւ շփվող: Ցանկալի չէ համակարգչի մոտ անցկացնելը լավ վարքի կամ ուսման խրախուսանք դարձնել: Դա ոչ առողջ մոտիվացիա կձեւավորի: Խորհուրդ չի տրվում երեխային լիովին ազատություն տալ համակարգչային խաղեր ընտրելիս, որոշ խաղեր անհրաժեշտ է լիովին բացառել: Եթե ամեն դեպքում կախվածություն առաջացել է, պետք է գործել համառորեն: Ոչ մի դեպքում պետք չէ, որ ծնողները երեխայի, դեռահասի խնդիրների լուծումները վերցնեն իրենց վրա, այլ անհրաժեշտ է բացատրել, որ խնդիրներն առաջացել են համակարգչի մոտ կորցրած ժամանակի արդյունքում: Երեխան պետք է դեմ առ դեմ հանդիպի իր խնդրին, որպեսզի ցանկանա փոխվել:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդու համար անունն ավելի թանկ է, քան կյանքը, եւ դրա համար էլ մարդ պիտի աշխատի նախ իր անվան, ապա` կյանքի համար:

***ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ***
***Հայ դրամատուրգ***

Ճիշտ է, արդյոք, որ մարդն ապրի եւ ոչինչ չանի աշխարհի համար:

***ՆԻԿՈԼՈԶ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ***
***Վրաց բանաստեղծ***

Տգետների հետ վիճաբանելը խիստ վտանգավոր է, որովհետեւ սկզբից նրանք քեզ իջեցնում են իրենց մակարդակին, իսկ հետո` հաղթում հարուստ կենսափորձի շնորհիվ:

***ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ***
***Ֆրանսիացի գրող***

Երբեք ուրիշներին մի անհանգստացրու այն բանի համար, ինչն ինքդ էլ կարող ես անել:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***Ռուս գրող***

Անհնար է միշտ լինել հերոս, բայց միշտ կարելի է մարդ մնալ:

***ՅՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ՖՈՆ ԳՅՈԹԵ***
***Գերմանացի քնարերգու***

Եթե դուք որեւէ գեղեցիկ, հոգեւոր գործ եք անում, բայց դա ոչ ոք չի նկատում, մի տխրեք: Լուսաբացն աշխարհի ամենագեղեցիկ երեւույթն է, սակայն մարդկանց մեծ մասը այն չի տեսնում, քանի որ այդ ժամանակ շատերը դեռ քնած են:

***ՋՈՆ ԼԵՆՈՆ***
***Անգլիացի երգիչ, երգահան***

Ի գիտություն աղջիկների. ճիշտ ընտրված կիսաշրջազգեստը ցուցադրում է ոչ միայն ձեր ոտքերը, այլ նաեւ` ինտելեկտը:

***Ն.Հ.***
***«Վրաստան»-ի ընթերցող***

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎԻԵՏՆԱՄ ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐ

*Հուլիսի 4-6-ը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, պաշտոնական այցով գտնվում էր Վիետնամում:*

Այցի շրջանակներում, Նիկոլ Փաշինյանը հանդիպեց Վիետնամի վարչապետ Նգույեն Սուան Ֆուքիի, Ազգային ժողովի նախագահ Նգույեն Թի Քիմ Նգանի հետ: Կողմերը քննարկեցին երկկողմ տնտեսական հարաբերությունների խթանման հեռանկարները, անդրադարձ կատարեցին միջազգային թեմաներին: Հայաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ նաեւ Վիետնամի առեւտրի պալատի ղեկավարության եւ վիետնամցի գործարարների հետ, «Վիետնամ-Հայաստան բարեկամություն» հասարակական կազմակերպության անդամների հետ:

Վիետնամից Նիկոլ Փաշինյանը մեկնելու է Սինգապուր, որտեղ, հուլիսի 7-9-ին Սինգապուրի վարչապետ Լի Սյան Լունի հրավերով, լինելու է պաշտոնական այցով:

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետը հանդիպումներ կունենա Սինգապուրի բարձրագույն ղեկավարության՝ Սինգապուրի նախագահ Հալիմա Յակոբի, Սինգապուրի վարչապետ Լի Սյան Լունի, Սինգապուրի խորհրդարանի խոսնակ Թան Չուան-Ջինի հետ: Նախատեսվում է երկկողմ համագործակցության մասին փաստաթղթերի ստորագրում:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կայցելի Սինգապուրում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի, որտեղ կհանդիպի Սինգապուրում եւ հարեւան երկրներում գործող հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Նախատեսվում են նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումները Սինգապուրի գործարար շրջանակների հետ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ



*Հունիսի 30-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ալեքսանդր Լուկաշենկոյի հրավերով, Բելառուսի մայրաքաղաք Մինսկում ներկա գտնվեց Եվրոպական երկրորդ խաղերի փակման հանդիսավոր արարողությանը:*

Արարողությանը, պաշտոնական օթյակում, Հայաստանի նախագահը զրուցեց հարեւանությամբ գտնվող Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հարցին, թե ինչի՞ մասին են զրուցել, Արմեն Սարգսյանն ասաց. «Ի՞նչ կարող էին խոսել երկու նախագահները Մինսկում՝ Եվրոպական երկրորդ խաղերի փակման ժամանակ: Ամեն ինչից՝ մի-մի քիչ»:

Մինսկում Հայաստանի նախագահը հանդիպում ունեցավ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ: Բելառուսի նախագահը ողջունեց Արմեն Սարգսյանի այցը Բելառուս եւ նշեց, որ դեռեւս նախկինում էին պայմանավորվել, որ Հայաստանի նախագահը կայցելի Բելառուս եւ կծանոթանա երկրի հնարավորություններին: Նա տեղեկացրեց նաեւ, որ մինչ հանդիպումը հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Հանդիպմանը կողմերը խոսել են երկու երկրների համագործակցության խորացման եւ առկա ներուժի լիարժեք օգտագործման հեռանկարների մասին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ՄԵԴԱԼԱԿԻՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԵՏ



Հուլիսի 2-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Եվրոպական երկրորդ խաղերի մեդալակիր մարզիկների հետ: Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց մարզիկներին Եվրոպական խաղերում հաջողությունների հասնելու, մեդալներ նվաճելու կապակցությամբ եւ նրանց մրցելույթները գնահատեց հաջողված: Վարչապետը նշեց, որ առանձին մարզաձեւերում մեր մարզիկներն ունեն լավ հնարավորություններ՝ հավելելով, որ սպորտն ունի առաջնային նշանակություն:

Մարզիկները շնորհակալություն հայտնեցին վարչապետին ընդունելության համար, այնուհետեւ՝ ներկայացրին արդյունքները: Մարզիչներն ու մարզիկները խոսեցին նաեւ առանձին մարզաձեւերի զարգացման հնարավորությունների, ինչպես նաեւ խնդիրների մասին:

Հանդիպման ավարտին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մաղթեց հաջողություններ առաջիկայում նախատեսված մրցելույթներում եւ Օլիմպիական խաղերին նախապատրաստվելու փուլում:

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հուլիսի 1-ին, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում, կայացավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ամենամյա դասընթացների մեկնարկի արարողությունը, որին մասնակցում էին նաեւ Վրաստանի ներկայացուցիչներ:*

Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա ծրագիրը գործում է 2000 թվականից՝ աստիճանաբար ընդլայնվելով եւ խորանալով: 2019-ին ծրագրին մասնակցելու համար դիմել էր շուրջ 80 ուսուցիչ՝ 16 երկրից, այդ թվում Վրաստանից: Արդյունքում՝ մասնակցում է 61 ուսուցիչ: Այս տարվա ուսուցիչների մեծ մասը վերապատրաստվում է նախարարության տվյալ ծրագրով արդեն երկրորդ եւ նույնիսկ երրորդ անգամ:

Այս տարի նախատեսված է վերապատրաստում հինգ ուսումնական խմբերում՝ մանկապարտեզի, տարրական ուսուցման, մեկօրյա դպրոցների, հայոց լեզվի ու գրականության դասավանդման, նկարչության եւ կիրառական արվեստի ուղղություններով:

Դասընթացների վերջում ուսուցիչներին տրվելու է ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի վկայագիր:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ



*Կոմիտաս Վարդապետի եւ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հոբելյանները կարեւորելու, նրանց կատարած անգերազանցելի աշխատանքն արժեւորելու նպատակով, հուլիսի 3-ին, Հայաստանի նկարիչների միությունում բացվեց «Կոմիտաս-Թումանյան 150» խորագրով ցուցահանդեսը:*

Միջթանգարանային համագործակցության արդյունքում իրականացված ցուցադրության շրջանակներում ներկայացված են Կոմիտասի ու Թումանյանի մասին պատմող գեղանկարչական, գծանկարչական աշխատանքներ, քանդակներ, արխիվային բացառիկ նյութեր:

Այստեղ տեղ են գտել ցուցանմուշներ Հայաստանի ազգային պատկերասրահից, Կոմիտասի թանգարան-ինստիտուտից, Հովհ.Թումանյանի, Երվանդ Քոչարի թանգարաններից, Արա Սարգսյանի եւ Հակոբ Կոջոյանի տուն-թանգարաններից, Գեւորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարանից եւ մասնավոր հավաքածուներից:

Ընդգրկվել են Գրիգոր Խանջյանի, Սարգիս Մուրադյանի, Էդուարդ Արծրունյանի, Արա Բաղդասարյանի, Սուրեն Սաֆարյանի եւ այլ նկարիչների ստեղծագործություններ:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ հուլիսի 12-ը:

## ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



***Հայաստանի եւ Իրանի միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով, Թեհրանում գտնվող փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը հանդիպում է ունեցել Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ: Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Իրանի միջեւ համագործակցության զարգացման եւս մեկ խթան հանդիսացող Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի գոտու ստեղծմանն ուղղված ժամանակավոր համաձայնագրով նախատեսված հնարավորությունները:***

## ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԸ՝ ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՊԱՀ



***Հուլիսի 4-ին, Ստամբուլում, Պոլսո պատրիարքությունում անցկացվեցին տեղապահի ընտրությունները: Տեղապահի պաշտոնն այս փուլում կարեւորվում է, քանի որ նորընտիր տեղապահն է կազմակերպելու Պոլսո նոր պատրիարքի ընտրությունը: Պոլսո նախկին պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի հիվանդությունից հետո, Պոլսո աթոռը տասը տարուց ավելի գործում էր առանց պատրիարքի:***

***Նշենք, որ տեղապահի թեկնածուներ էին առաջադրվել Պոլսո միաբանության անդամներից երկու եպիսկոպոսներ՝ Արամ արքեպիսկոպոս Աթեշչյանն ու Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Ընտրության արդյունքներով Պոլսո պատրիարքարանի տեղապահ՝ 13 ձայնով ընտրվեց Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, իսկ Արամ արքեպիսկոպոս Աթեշչյանը ստացավ ընդամենը՝ 11 ձայն:***

***Ավելացնենք, որ ժողով-ընտրությունը պետք է անցկացվեր անցյալ շաբաթ, սակայն հետաձգվել էր մինչ օրս անհայտ պատճառներով:***

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

***Համազգային Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի օպերատիվ տվյալների՝ այս տարվա մայիսին, 2018-ի նույն ամսվա համեմատ, արձանագրվել է ապրանքների արտահանման 11.7% աճ, որոշ ապրանքային խմբերի արտահանումն աճել է երկնիշ ցուցանիշներով:***

## ԱՌԱՆՑ ԱՅՑԵԳՐԻ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ 60 ԵՐԿԻՐ

***Հայաստանը 2019 թվականի երրորդ եռամսյակում Henley & Partners ընկերության անձնագրերի ինդեքսում զբաղեցրել է 84-րդ տեղը. Հայաստանի քաղաքացիներն առանց վիզայի կարող են այցելել 60 երկիր:***

***Առաջին տեղում են Ճապոնիան եւ Սինգապուրը, որոնց քաղաքացիներն առանց վիզայի կարող են այցելել 189 երկիր: Երկրորդ տեղում են Գերմանիան, Ֆինլանդիան, Հարավային Կորեան, որոնց քաղաքացիներն առանց վիզայի կարող են այցելել 187 երկիր, իսկ երրորդում Դանիան, Իտալիան եւ Լյուքսեմբուրգն են՝ առանց վիզայի 186 երկիր մուտքի հնարավորությամբ:***

***Հայաստանին հարեւան Վրաստանը 52-րդն է, այդ երկրի քաղաքացիները կարող են առանց վիզայի այցելել 113 երկիր:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒԼԻՍ

*6.07.2019. Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը*

*8.07.2019. Սուրբ վկաներ Անտոնինոսի, Թեոփիլոսի, Անիքտոսի եւ Փոտինոսի հիշատակության օր*

*9.07.2019. Դանիել մարգարեի եւ Սեդրակ, Միսաք, Աբեդնագով երեք մանուկների հիշատակության օր*

*11.07.2019. Տոն՝ Սուրբ թարգմանիչներ Սահակի եւ Մեսրոպի*

## ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ

# ՄԵՐ ԹԱՏՐՈՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է

Ինչպես բազմիցս հաղորդել ենք, արագ տեմպերով առաջ է ընթանում Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի կողմից շուրջ 19 միլիոն լարիով ֆինանսավորվող Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նոր, ժամանակակից շենքի շինարարությունը: Նույն տեղում, անցյալ տարվա մայիսին մեկնարկած շինարարության արդյունքում, արդեն բարձրացվել է երկրորդ հարկը:


03.07.2019թ.
Լուսանկարը՝ ԳԱՐՐԻ ՄԱՆՈՅԱՆԻ

«Վրաստան» թերթը ծրագրել է պարբերաբար լուսանկարներ հրապարակել թատրոնի շինարարության ընթացքից, ինչն ընթերցողներին թույլ կտա համեմատել կատարված աշխատանքների ծավալներն ու ընթացքը:

## ՍՊՈՐՏ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 30 ՄԵԴԱԼՈՎ 7-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ - 11 ՄԵԴԱԼՈՎ՝ 11-ՐԴԸ

***Բելառուսի մայրաքաղաք Մինսկում եզրագիծը հատեցին Եվրոպական երկրորդ խաղերը, որին 15 մարզաձեւերով մասնակցեց 43 երկրի 4000 մարզիկ:***

MINSK 2019 2nd EUROPEAN GAMES

Եվրոպական խաղերում Վրաստանը ներկայացված էր 61 մարզիկով՝ 7 մարզաձեւերում: Վրաստանի դրոշի ներքո նրանք կարողացան նվաճել 30 մեդալ, այդ թվում՝ 6 ոսկե, 10 արծաթե եւ 14 բրոնզե եւ թիմային հաշվարկում զբաղեցնել 7-րդ տեղը:

Հայաստանը այդ խաղերին ներկայացվել էր 37 մարզիկով՝ 9 մարզաձեւերում: Հայ մարզիկները նվաճեցին 11 մեդալ, այդ թվում՝ 5 ոսկե, 3 արծաթե եւ 3 բրոնզե եւ թիմային հաշվարկում հանգրվանեցին 11-րդ տեղում::

Թիմային հաշվարկում առաջինը Ռուսաստանի հավաքականն է՝ 109 մեդալով (44 ոսկե, 23 արծաթե, 42 բրոնզե): Երկրորդը՝ Բելառուսը՝ 69 մեդալով (24,16 29), երրորդը՝ Ուկրաինան՝ 51 մեդալով (16,17,18):

# ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Անժամանակ մի կորուստ ունեցանք: Կյանքից հեռացավ հրաշալի գերդաստանի զավակ, նշանավոր լրագրող, մեր «Սովետական Վրաստան» թերթի բազմամյա սեփական թղթակից Ախալքալաքիից ու Բոգդանովկայից (այժմ՝ Նինոծմինդա) Աղասի Մելքոնյանի ավագ որդին եւ նույնքան նշանավոր պատմաբան, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի եղբայրը՝ Կարապետ Մելքոնյանը:

Կարապետ Մելքոնյանը ծնվել էր 1952 թվականին, Ախալքալաքիում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ մասնագիտական ուսուցում է անցել Հայաստանի Կալինինոյի (այժմ՝ Տաշիր) կաթնամթերային տեխնիկումում, ապա՝ Ռուսաստանի Յարոսլավլ մարզի Ոգլիչ քաղաքում մասնագիտացել է որպես կաթնամթերային տեխնոլոգ:

Բնատուր դիրքերն ու շնորհները նա լիաթոք ու լիասիրտ կերպով օգտագործել է իր հայրենի քաղաքին, երկրամասին ծառայելու:

Կարապետ Մելքոնյանը նաեւ արվեստասեր անհատականություն էր, իսկ նախասիրությունների ոլորտը երաժշտության ասպարեզում էր: Տասնամյակներ շարունակ հանդես է եկել հայրենի քաղաքում գործող «Ջավախք» վոկալ գործիքային համույթի կազմում: Նա 2000-ականների սկզբին հիմնեց Ախալքալաքիում հայերենով հեռարձակվող հեռուստատեսային ալիք՝ ATV-12 հեռուստաընկերությունը:

Ծավալուն ու բովանդակալից էին Կարապետ Մելքոնյանի առաջիկայի ծրագրերն ու նախագծերը, սակայն դրանց վիճակված չէր վերածվել իրականության: Դավադիր անբուժելի հիվանդությունը, որն արագ քայքայեց եւ կորստի մատնեց նրա հոգեկան ու ֆիզիկական բոլոր ուժերը: 2019թ. մարտի 30-ին նա այլեւս չկար:

Մնացին նրա թողած բառն ու բանը, նրա ընկերական ու մարդկային մեծ առաքինություններն ու հմայքը: Մնացին որդին ու դուստրը՝ Աղասին ու Կատյան եւ չորս սիրունիկ թոռնիկները:

*Մի խումբ ընկերներ*

«Վրաստան» թերթի աշխատակազմը խորապես ցավում է թերթի լավ բարեկամ՝

***Կարապետ Աղասիի ՄԵԼՔՈՆՅԱՆԻ***

վաղաժամ մահվան կապակցությամբ եւ իր վշտակցությունն է հայտնում հանգուցյալի ընտանիքին ու հարազատներին:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի կոլեկտիվը ցավակցում են «Արեւիկ» մանկա-պատանեկան ամսաթերթի խմբագիր, «Վերնատան» անդամ Էմմա Ախտյանին, սիրելի եղբոր՝

***Էդուարդ Սարգսի ԱԽՏՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ՝ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



# ԽԱՉԲԱՌ




***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Դանդաղ, կամաց: 8.Արձակագիր, գեղանկարիչ ... Այվազյան: 9.Հողի մակերեսի տարածաչափ = 4047 քմ: 10.Բուլղարացի կույր պայծառատես: 13.Աչքի ... թռցնող: 18.Մեխանիզմ: 19.Ֆիզիկայի բաժին: 22.Ժողովրդական երգիչ: 23.Քիմիկոս՝ ... Մենդելեեւ: 27.Այրված փայտի մնացորդ: 29.Ջրլող թռչուն: 30.Վանդակածող: 31.Աքցան: 33.Նոր: 36.Մեքենան ղեկավարող մաս: 37.Ժողովը, նիստը ղեկավարող անձ: 41.Գյուղ Սամցխե-Ջավախեթիում: 42.Տավար: 45.Միապետների նախկին պաշտոնական անվանումը Ռուսաստանում եւ Բուլղարիայում: 47.Հայաստանի ժողովրդական արտիստ ... Խաչվանքյան: 48.Աֆրիկյան եւ եվրոպական երաժշտական ոճերի սինթեզման արդյունքում առաջացած երաժշտական արվեստի ձեւ: 49.Ծովային հսկա կաթնասուն: 50.Ստորգետնյա կառույց: 51.Էլեկտրական հոսանքի լարվածության չափման միավոր: 53.Ծխախոտի տեսակ: 54.Ռուսական էստրադային երգիչ: 55.Վրաց դերասանուհի ... Սուխիտաշվիլի: 56.Ամեն ինչին տեղյակ: 57.Փոքր տուն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Տրվում է ծնված օրից: 2.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 3.Անծանոթ: 4.Ծաղրախաղ, զավեշտախաղ: 5.Կանացի գլխաշոր արեւելքում: 6.Արեւմտահայ բանաստեղծ ... Մեծարենց: 11.Գյուղ Շիդա Քարթլիում: 12.Բանաստեղծ, թարգմանիչ Աշոտ ...: 14.Նազարի «հոգեառը»: 15.Սուրճի նստվածք: 16.Կնճիթավոր խոշոր կենդանի: 17.Պետություն Աֆրիկայում: 20.Կառավարության անդամ: 21.Հյուսնի գործիք: 24....-մանկապարտեզ: 25.Անճոռնի, գեշ: 26.Մանելու գործիք: 28.Աստվածաշնչյան մարգարե: 32.Կիսակապիկ վայրի կենդանի: 34.Անխառն, անեղծ: 35.Պոմպ: 38.Միտք կամ առհասարակ խոսք գրավոր եղանակով փոխանցելու ձեւ: 39.Բանահյուսական ժանր: 40.Խաղաղության պաշտպանության միջազգային կազմակերպություն: 43.Փայտից փորված կոշիկ: 44.Մտադրություն, իղձ: 46.Չամուսնացած: 49.Ամերիկացի երգչուհի ...: 50.Գլխի զարդարանք, որը հանդիսանում է միապետական ինշխանության խորհրդանիշ: 51.Հոռի, անպիտան: 52.Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի տեղակալ ... Գիգաուրի:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բարսելոնա: 5.Պոլիս: 8.Յոթվերք: 10.Կարապ: 12.Արի: 13.Լավա: 14.Նմանակ: 16.Արենի: 18.Օբ: 19.Ատոմ: 20.Դու: 21.Ուտիք: 22.Կոն: 25.Իցա: 26.Բարկ: 27.Սպա: 30.Որդան: 31.Գտա: 33.Փոստալ: 36.Հին: 37.Վեներա: 39.Յասոն: 41.Ուր: 42.Յարա: 44.Դամբ: 45.Ահմադ: 47.Մանիլա: 50.Ալանիա: 52.Լուր: 53.Փայլան: 54.Ավո: 56.Նու: 57.Ղազար: 58.Ծիրան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բայանդուր: 2.Սավան: 3.Լորիկ: 4.Անկարա: 5.Պարանոց: 6.Լուպե: 7.Ստամբուլ: 9.Երազ: 11.Ավետիս: 13.Լա: 15.Աղիք: 17.Իմաստ: 18.Օդ: 22.Կարլ: 23.Որդ: 24.Նկատեց: 26.Բոա: 28.Պահ: 29.Խոնարհ: 32.Ենգիբարյան: 34.Տրոյա: 35.Սերբիա: 38.Աիդա: 39.Յուան: 40.Նադալ: 43.Աման: 46.Մշակ: 48.Ան: 49.Նիհար: 51.Լամա: 52.Լոդր: 54.Այծ: 55.Են:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445